ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«22» «փետրվարի» 2023 թ. № 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 14-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով և 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1846--Ն որոշման 4-րդ կետը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2015 թվականի հունվարի 19-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 14-Ա հրամանի 1-ին կետի 1)-րդ ենթակետով հաստատված հավելված N 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փոփոխության պետական գրանցումը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

2/22/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«22» փետրվարի 2023թ.
ք. Երևան

Կազմված է «22» 02 2023թ.
Բաղկացած է 6 էջից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Շրջակա միջավայրի նախարարի
2023թ. 02 ի N 57-Ա հրամանի
Հ. Սիմիդյան
«22» 02 2023թ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 11. 02. 2003թ
գրանցման համար՝ 286.210.04863
ՀՎՀՀ՝ 02543163
20. 09. 2018թ. գրանցված կանոնադրության
թիվ 002 2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
«17» 03 2023թ

«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Ք. ԵՐԵՎԱՆ
2023թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող Հայաստանի Հանրապետության տարածքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնող կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի և այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի հիման վրա, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության /այսուհետ՝ հիմնադիր/: Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1846-Ն որոշմամբ, որով «Պետական բնապահպանական փորձաքննություն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով վերակազմակերվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության:

Կազմակերպությունը հանդիսանում է «Պետական բնապահպանական փորձաքննություն» պետական փակ բաժնետիրական ընկերության /գրանցման N 286.120.03351/, ինչպես նաև դրա վերակազմակերպման արդյունքում ստեղծված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:

3. Կազմակերպության կանոնադրությունը դրա հիմնադիր փաստաթուղթն է:

4. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

5. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

2) հայերեն կրճատ՝ «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ,

3) ռուսերեն լրիվ՝ "Экспертизный центр оценки воздействия на окружающую среду" ГНО,

4) ռուսերեն կրճատ՝ "ЭЦОВОС" ГНО,

4) անգլերեն լրիվ՝ "Environmental Impact Expertise Center" SNCO

5) անգլերեն կրճատ՝ "EIEC" SNCO

6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Փավստոս Բուզանդի փողոց 1/3:

II ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

7. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության տարածքում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և փորձաքննական եզրակացության նախագիծը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հաստատմանը, իսկ անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրույթային փաստաթղթի կամ գործունեության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

8. Իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունն օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթարկում՝

1) հանրապետության սոցիալ-տնտեսական, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, առողջապահության, շրջակա միջավայրի, ռեկրեացիայի, սպասարկման, անտառտնտեսության, թափոնների գործածության, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրույթային փաստաթղթերը,

2) նախատեսվող տնտեսական, սոցիալական և այլ գործունեությունների (շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, տեղափոխում, կոնսերվացում, փակում, ընդլայնում, լուծարում) փաստաթղթերը:

9. Կազմակերպության հիմնական լիազորություններն են.

1) փորձաքննական գործընթացին վերաբերող քաղաքականության մշակմանը մասնակցելը,

2) փորձաքննական գործընթացը կարգավորող իրավական ակտերի մշակմանը մասնակցելը,

3) իր իրավասության սահմաններում փորձաքննության իրականացումը, փորձաքննական եզրակացության կազմումն ու տրամադրումը,

4) փորձաքննական գործընթացում պայմանագրային հիմունքներով փորձագետների ներգրավումը,

5) առնչվող մարմինների հետ անհրաժեշտության դեպքում հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության համաձայնեցումը,

6) հանրային լսումներում իր ներկայացուցչի մասնակցության ապահովումը,

7) տեխնիկական առաջադրանքի կազմումն ու ձեռնարկողին տրամադրումը:».

10. Կազմակերպությունն օրենքին և հիմնադրի որոշմանը համապատասխան իրականացնում է պայմանագրային հիմունքներով ձեռնարկատիրական գործունեության վճարովի մատուցում՝ փորձաքննությանը վերաբերող գրականության, տեղեկատվական նյութերի ու բացիկների պատրաստում և հրատարակում:

11. Կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեություն կարող է իրականացնել լիցենզիայի առկայության դեպքում:

III ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, դրա լիազորած պետական կառավարման մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

13. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
14. Հիմնադրի բացառիկ լիազորությունները սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով:
15. Կազմակերպության ընդհանուր կառավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը, որպես ոլորտի կառավարման պետական լիազորված մարմին:
16. Պետական լիազորված մարմնի լիազորություններն են՝
1) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.
2) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
3) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և/կամ ամրագրված պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.
4) կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
5) կազմակերպության աշխատանքային ծրագրերի հաստատումը և գործունեության վերահսկողությունը.
6) կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչումը.
7) կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները լսելը և դրա գործունեության վերստուգման արդյունքները քննարկելը.
8) կազմակերպությանն ամրագրված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը.
9) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի հաստատումը.
10) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
11) կազմակերպության հաստիքային ցուցակի հաստատումը.
12) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը:
17. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի է նշանակում և ազատում լիազորված պետական մարմինը: Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
18. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, պետական կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված

բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին:

19. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

20. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և/կամ պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

21. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

22. Տնօրենն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված և պայմանագրով իրեն տրված այլ լիազորություններ:

23. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

24. Տնօրենի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է տնօրենը՝ լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

25. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) օրենսդրությամբ հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) պայմանագրային հիմունքներով ընդունում է աշխատողներ.

5) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է բանկային կամ գանձապետական հաշիվներ.

7) սահմանում է կազմակերպության կառուցվածքը.

8) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

9) ապահովում է կազմակերպության գործունեության վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների կազմումը և սահմանված կարգով ներկայացնում լիազորված պետական մարմնին.

10) իրականացնում է օենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

26. Կազմակերպությունն՝

1) ինքնուրույն է կազմակերպում իր գործունեությունը, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքում պայմանագրեր և որոշում պայմանագրային հիմունքներով ներգրավված փորձագետների կողմից մատուցվող ծառայությունների արժեքները.

2) հաշվապահական հաշվառումը վարում է «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով, հաշվապահական ստանդարտներով և այլ իրավական ակտերով

սահմանված կարգով ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններ, հարկերը վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար օրենքով սահմանված կարգով ու դրույքաչափերով.
3) կրում է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:
27. Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կազմակերպության աշխատակիցների առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

IV ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

28. Կազմակերպությունն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տիրապետում է իրեն հատկացված և ամրագրված գույքը:
29. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի կողմից իրականացվող ֆինանսավորումից, միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող աշխատանքների/ծրագրերի/ միջոցներից, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությունների մատուցման դիմաց վճարումներից, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:
30. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:
31. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության արժույթով կամ արտարժույթով:

V ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

32. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:
33. Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

VI ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

34. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և/կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: